

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 2/8

20 հունվարի 2015 թ.

Քննարկվեց ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության 20.11.2014 թ-ի գրությամբ բերված գանգատը ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության կողմից հաշվետվությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետից շուտ ներկայացվելու համար կիրառված պատասխանատվության միջոցները վերանայելու վերաբերյալ:

ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության կողմից 2013թ. օգոստոս ամսվա եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկն էլեկտրոնային եղանակով ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու տարածքային հարկային տեսչություն (այսուհետ՝ Գյումրու ՏՀՏ) թյուրիմացաբար ուղարկվել է օրենքով սահմանված ժամկետից շուտ՝ 26.08.2013թ.:

Նույն հարկային տեսչության պետի 27.02.2014թ. թիվ 131 ծանուցագրով ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչությանը հայտնվել է, որ 26.08.2013թ. էլեկտրոնային եղանակով Գյումրու ՏՀՏ ուղարկված 2013թ. օգոստոս ամսվա եկամտային հարկի հաշվարկը համարվել է ոչ ճիշտ ժամանակահատվածի համար ուղարկված, և խնդրվել է 5-օրյա ժամկետում Գյումրու ՏՀՏ, բացառապես էլեկտրոնային եղանակով, ուղարկել 2013թ. օգոստոս ամսվա եկամտային հարկի հաշվարկը:

2014թ. մարտի 7-ին ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության կողմից նույն հաշվարկը էլեկտրոնային եղանակով կրկին ուղարկվել է Գյումրու ՏՀՏ:

2014թ. օգոստոս ամսին ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության ֆինանսական մասի պետին Գյումրու ՏՀՏ-ում բանավոր հայտնել են, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ 2013թ. օգոստոս ամսին վճարված 2.129.959 ՀՀ դրամ եկամտային հարկի գումարի համար հաշվարկվել է 1.063.354 ՀՀ դրամ տուգանք:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է վերանայել 2013թ. օգոստոս ամսվա եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկը սահմանված ժամկետից շուտ ներկայացնելու համար լրացուցիչ հաշվարկված պարտավորությունը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության կողմից 2013թ. օգոստոս ամսվա եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկն էլեկտրոնային եղանակով ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ է ուղարկվել օրենսդրությամբ սահմանված ժամկետից շուտ՝ 26.08.2013թ.:

